ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1593

16.10.2015թ

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի հոկտեմբեր ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Դիլիջանի ԶՊՎ, այնտեղ հանդիպեց ձերբակալված Գագիկ Հայկազի Պետրոսյանին:

Ուսումնասիրությունների և վարչակազմի հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ տվյալ անձի տեսակցության վերաբերյալ ոչ մի սահմանափակում չկար վարույթն իրականացնող մարմնի կողմից և տեսակցությունը ցանկացած պահի կարելի էր կազմակերպել:

Այցելությունից րոպեներ անց, Դիտորդական խումբը կապի մեջ լինելով տվյալ ձերբակալվածի կնոջ հետ, պարզեց, որ կինը այցելել է տվյալ բաժին և խնդրել է տեսակցություն՝ ձերբակալված ամուսնու հետ, որը անհասկանալի պատճառներով արգելվել է:

Դիտորդական խմբի անդամները ձերբակալվածի կնոջը խնդրեցին, որպեսզի հեռախոսը փոխանցի տեսակցությունն արգելող ոստիկանին, բայց՝ ապարդյուն: Տվյալ բաժնի հերթապահ մասի ոստիկանը չպատասխանեց հեռախոսազանգին և բարձրաձայն մեկնաբանեց, որ իրենք տեսակցություն չեն տրամադրում ձերբակալվածներին, այլ միայն հանձնուք են ընդունում:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստը և Դիտորդական խմբին տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

Հ. Սահակյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՈՒՏՔ № 4916
13. 10. 15

ՀՀ Ոստիկանության Քարտուղարություն
Մուտք Թիվ 7061
19. 10. 2015թ.

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60
www.policemonitoring.org

Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 3780 <<05>> 11 2015թ.

Ձեր 16.10.2015թ. թիվ 2621/1593 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Տավուշի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունը:

2015թ. հոկտեմբերի 9-ին ժամը 20.10-ին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի ՁՊՎ է ընդունվել ՀՀ ՔԿ Տավուշի ՄՔՎ Դիլիջանի քննչական բաժնի քննիչի որոշմամբ սպանության փորձ կատարելու կասկածանքով ձերբակալված Գ. Պետրոսյանը: Հոկտեմբերի 10-ին ժամը 10.30-ի սահմաններում ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժին է այցելել ձերբակալված Գ. Պետրոսյանի կինը՝ Լ. Հովհաննիսյանը և մոտենալով հերթապահ մասի պետին, խնդրել է ձերբակալված ամուսնու համար հանձնուք ընդունել, ինչպես նաև տեսակցել վերջինիս: ՀՀ ոստիկանության Դիլիջանի բաժնի հերթապահ մասի պետը Լ. Հովհաննիսյանից հանձնուք ընդունելու համար դիմում է վերցրել, ընդունել հանձնուքը և վերջինիս բացատրել է, որ նշված օրը տեսակցություն տրամադրել հնարավոր չի լինի, քանի որ Դիլիջանի քննչական բաժնից ստացված գրության համաձայն տվյալ պահին անհրաժեշտ է եղել ապահովել ձերբակալված Գ. Պետրոսյանի մասնակցությունը քննչական փորձարարությանը:

ՀՀ ոստիկանության շտաբ